Schweizerische Eidgenossenschaft
Confédération suisse
Confederazione Svizzera
Confederaziun svizra

Swiss Agency for Development and Cooperation SDC

Անտառների դերը Հայաստանի զարգացման գործընթացում

Ի՞նչ են անտառները:

Անտառները Երկիր մոլորակի կարևորագույն էկոհամակարգերից մեկն են: Այս բազմազան կենսահամակեցությունները ձևավորվում են, երբ ծառերի ճյուղերն ու տերևները առաջացնում են սաղարթային ծածկույթ (կանոպե), որը կլանում է տեղումների կաթիլները և ձևավորում ստվերային միկրոմիջավայր՝ ապահովելով անտառների կայացման և ինքնակարգավորման համար անհրաժեշտ պայմաններ: Անտառային էկոհամակարգերում հանդիպում է բուսական տեսակների լայն բազմազանություն՝ ներառյալ սնկեր, մամուռներ, քարաքոսեր, պտերներ, խոտաբույսեր, մագլցող բույսեր և խոտեր: Անտառները նաև բնակավայր են բազմաթիվ կենդանիների, այդ թվում՝ միջատների, կաթնասունների, երկկենցաղների, թռչունների և սողունների համար: Ընդհանուր առմամբ, ցամաքային բույսերի և կենդանիների ավելի քան 80 տոկոսը բնակվում է անտառներում:

Հայաստանում բնական անտառները հիմնականում կազմված են հաճարենուց, կաղնուց, բոխուց, ինչպես նաև բազմաթիվ այլ ծառերի և թփերի տեսակներից: Անտառների կազմն արտացոլում է տեղական հողային և կլիմայական պայմանները, ինչպես նաև հողօգտագործման և անտառային կառավարման գործելակերպերը: Տասնամյակների և դարերի ընթացքում անտառները զարգանում են բնական էկոլոգիական հաջորդականության և շրջակա միջավայրի փոփոխվող պայմանների ազդեցությամբ:

Հայաստանի պատմության ընթացքում անտառները կարևոր դեր են ունեցել երկրի հարուստ կենսաբազմազանության պահպանման և բնական ռեսուրսների ապահովման գործում: Դրանց նշանակությունը դուրս է գալիս Հայաստանի սահմաններից, քանի որ դրանք Կովկասյան տարածաշրջանի ավելի ընդարձակ մասն են կազմում, որը համաշխարհային մակարդակով ճանաչված է իր բարձր կենսաբազմազանությամբ և էկոլոգիական արժեքով:

Հայաստանում անտառածածկույթը խիստ սահմանափակ է. ներկայումս այն կազմում է երկրի տարածքի մոտ 11–14 տոկոսը և բնորոշվում է խիստ մասնատվածությամբ: Անտառները հիմնականում կենտրոնացած են Տավուշի և Լոռու մարզերի հյուսիսային, ինչպես նաև Սյունիքի մարզի հարավային շրջաններում:

Հայաստանում անտառների դերի մասին ամփոփ նկարագրություն

Պաշտպանություն

- Հողի դեգրադացիայից և անապատացումից
- Ձնահոսքերից, քարաթափումներից, կավի և ջրասող փայտանյութի՝ դեպի գետեր ներթափանցումից
- Ջրհեղեղներից

Մատակարարում

- Վառելիքի և շինարարության նպատակով կենսանյութ և վառելափայտ
- Ոչ փայտանյութային արտադրանք
  - Հատապտուղներ, խոտաբույսեր, սունկ, մեղր, խեժ
  - Դեղաբույսեր
  - Սերմեր

Բարեկեցություն

- Ջրային ռեսուրսների կարգավորում, պահեստավորում և հասանելիություն
- Տեղական ջերմաստիճանի և խոնավության պայմանների կայունացում
- Ջրից, օդից և հողից աղտոտիչների հեռացում
- Հողագոյացում և հողի կայունացում
- Պահպանություն
  - տեղական տեսակների, փոշոտիչների և այլ օգտակար օրգանիզմների համար բնական կենսամիջավայրերի ապահովում
  - բնակավայրերից վայրի կենդանիների, հատկապես արջերի, առանձնացում:
- Թթվածնի արտադրություն
- Ածխածնի կլանում և պահեստավորում
- Հանգստի, ժամանցի, սպորտի և արկածային զբոսաշրջության համար տարածքների ապահովում
- Աշխատատեղերի ստեղծում (անտառային տնտեսություն, զբոսաշրջություն):

Անտառների կենսաբազմազանությունը կարևոր նախապայման է անտառների կողմից մատուցվող էկոհամակարգային ծառայությունների և օգուտների շարունակական ապահովման համար: Հայաստանի հիմնականում չոր և մայրցամաքային կլիման՝ շոգ ամառներով, ցուրտ ձմեռներով, սակավ տեղումներով և հաճախակի երաշտային ժամանակաշրջաններով, պահանջում է հետևողական ջանքեր՝ կայուն անտառածածկի պահպանման համար: Ապագա սերունդների համար անտառներից ստացված օգուտների պահպանումը հնարավոր է միայն անտառների պատասխանատու կառավարման և անտառային սահմանների նկատմամբ հարգալից ու խնամքով վերաբերմունքի շնորհիվ:

Գյուղատնտեսության և անտառի փոխշահավետ համակեցությունը

Անտառները տարբեր եղանակներով նպաստում են գյուղատնտեսությանը: Դրանք ապրելավայր են փոշոտիչների՝ մեղուների, կրետների և այլ օգտակար օրգանիզմների համար, կարգավորում և կուտակում են ջրային ռեսուրսները, նվազեցնում աղտոտվածությունը, պաշտպանում ջրհեղեղներից և նպաստում տեղական ջերմաստիճանային պայմանների կայունացմանը: Հայաստանում, որտեղ հաճախ առկա են անբարենպաստ բնական պայմաններ, անտառները կենսական նշանակություն ունեն գյուղատնտեսության երկարաժամկետ արտադրողականության ապահովման համար: Ծառերը կարող են մեղմել եղանակային վտանգավոր երևույթների ազդեցությունը՝ ապահովելով ստվեր և ծառայելով որպես հողմապաշտպան գոտիներ, որոնք նվազեցնում են ջերմային ալիքների և ուժեղ քամիների ազդեցությունը: Շատ դեպքերում գյուղատնտեսական հողերում ծառերի և ցանկապատերի տնկումը արդյունավետ և նպատակահարմար լուծում է:

Հայաստանի լեռնալանջերը կարող են որպես արոտավայր օգտագործվել ավելի քան մեկ միլիոն գլուխ գյուղատնտեսական կենդանիների համար: Սակայն պետք է արգելել դրանց մուտքը դեպի անտառներ: Խոշոր եղջերավոր կենդանիները, ոչխարները, այծերը, խոզերը, ձիերը և այլ կենդանիներ տվյալ տարածքներում քայլելու, արածելու և հանգստանալու ընթացքում մնասում են սածիլներն ու ստորին բուսածածկը՝ խոչընդոտելով անտառի բնական վերականգնումը, ինչն առանց այդ էլ խաթարված և խնդրահարույց է Հայաստանում անտառների վերաճի և զարգացման բարդ պայմաններում: Արդյունքում պահպանվում են միայն հասուն ծառերը: Երիտասարդ ծառերի բացակայության դեպքում տարեց ծառերի բնական մահացությունը հանգեցնում է անտառային սաղարթածածկի բացվածքների առաջացմանը: Երբ այդ բացվածքները մեծանում են, անտառն այլևս չի կարող լիարժեք կատարել իր պաշտպանական և այլ էկոհամակարգային գործառույթները: Տասնամյակներ շարունակ անտառային տարածքներում կենդանիների արոտային պահվածքից առաջացած ճնշումը խոչընդոտում է անտառի վերականգնումը, որն ի վերջո կարող է հանգեցնել անտառի քայքայման: Այդ վտանգը կանխելու միակ արդյունավետ միջոցը գյուղատնտեսական կենդանիներին անտառներից հեռու պահելն է:

Գյուղատնտեսական կենդանիների արածեցման հետևանքով անտառների վրա առաջացած ճնշումը նվազեցնելուց բացի՝ կարևոր է նաև կանխել անտառային հրդեհները: Հայաստանում անտառային հրդեհների հետևանքով ոչնչացվում են անտառածածկ տարածքների զգալի հատվածներ: Ուստի անտառային հրդեհների կանխարգելումը նույնպես չափազանց կարևոր է: Միշտ անհրաժեշտ է ապահովել հրդեհների վերահսկելիությունը և դրանց՝ շրջակա տարածքներում տարածվելու ռիսկերի կանխումը: Եթե հարգենք անտառի սահմանները և խնամքով վերաբերվենք նրան, անտառը կշարունակի մեզ և ապագա սերունդներին ապահովել փայտանյութով, մաքուր ջրով և սննդով: Իսկ եթե պաշտպանենք անտառը գյուղատնտեսական կենդանիների մնասակար ազդեցությունից և անտառային հրդեհներից, այն իր հերթին կպաշտպանի մեզ և մեր երեխաներին ջրհեղեղներից, ուժեղ քամիներից ու հողերի դեգրադացիայից:

Բնակավայրերի, գյուղատնտեսության և անտառների համակեցությունը



Ամփոփում. ագրոանտառային տնտեսությունը ենթադրում է ծառերի աճեցում և պահպանում գյուղատնտեսական հողերում, որը կարող է բարձրացնել արտադրողականությունը, նպաստել կենսաբազմազանության պահպանմանը և բարելավել հողի առողջությունը՝ գյուղատնտեսությունը դարձնելով առավել հարակայուն և բազմազան:

Անտառներից ստացված օգուտների էվոլյուցիան

Միջնաժամկետ փուլ/ վաղ տարիների ներդրումներ

0 - 10 տարի

Անտառատնկարկ

Արդյունավետ ներդրումներ
- ոռոգում
- ցանկապատում
- մոլախոտերի հեռացում

$ $ $

Բարձր ռիսկեր
- սողանքներ
- ձնահյուսեր
- չորություն / երաշտայնություն
- ջրի կորուստ
- փոթորիկներից և քամիներից պատճառված մնասներ/ դեգրադացիա

Միջնաժամկետ փուլ. հավասարակշռություն

10 - 20 տարի

Խնամք և պահպանում

Ներդրումներ
- ոռոգում
- մոլախոտերի հեռացում
- լրացուցիչ (փոխարինող) տնկարկներ

$ $

Որոշակի ռիսկեր
- սողանքներ
- ձնահյուսեր
- չորություն / երաշտայնություն
- ջրի կորուստ
- փոթորիկներից և քամիներից պատճառված մնասներ/ դեգրադացիա

Հասունության փուլ. օգուտները գերակշռում են, ներդրումներն արդարացվում են

20 - 60 տարի

Նոսրացում և բնական ճանապարհով վերականգնում

Ներդրումներ
- անտառափայտի օգտագործումից կախվածություն

$

Ավելի ցածր ռիսկեր

Երկարաժամկետ փուլ. կայուն և բնահեն անտառային կառավարում

60 - 140 տարի

Անտառի կառավարում

Խթանում
- բնական վերականգնում
- տեսակային բազմազանություն

Եկամուտ
- կայուն անտառային տնտեսություն

Նվազագույն ռիսկեր

Ապագա

Անտառներից ստացված օգուտները ժամանակի ընթացքում ավելանում են

0 - 20 տարի

Ռեսուրսների ապահովման/մատակարարման ծառայություն
Հատապտուղներ, դեղաբույսեր

Բարեկեցությանը նպաստող ծառայություն
հողի ձևավորում, ֆոտոսինթեզ (CO_2-ի կլանում և O_2-ի արտազատում)

20 - 60 տարի

Ռեսուրսների ապահովման/մատակարարման ծառայություն
Սունկ, բարակ բնափայտ, սերմերի արտադրություն

Բարեկեցությանը նպաստող ծառայություն
Կենսամիջավայրերի ձևավորում, ջրի, օդի և հողի մաքրում, հանգստի և զբոսաշրջության հնարավորություններ

60 - 140 տարի

Պաշտպանական ծառայություններ
պաշտպանություն քամիներից, ձնահյուսերից, սողանքներից

Ռեսուրսների ապահովման/մատակարարման ծառայություն
Խոշոր տրամաչափի բնափայտ

Բարեկեցությանը նպաստող ծառայություն
Կլիմայի կարգավորում, ջրի որակի բարելավում

Հաջորդ փաստաթերթիկի հակիրճ ներածություն

Այն տարածքներում, որտեղ իրականացվում է անտառապատում, անհրաժեշտ են սկզբնական ներդրումներ՝ ծառատնկման աշխատանքների, ինչպես նաև անտառապատ տարածքների շարունակական խնամքի և կառավարման համար, նախքան համայնքները կկարողանան լիարժեք օգտվել անտառների կողմից տրամադրվող օգուտներից: Մեր հաջորդ տեղեկատվական թերթիկում կներկայացնենք արդյունավետ անտառատնկարկների հիմնման և կառավարման գործնական միջոցառումները:

Հայեցակարգ և բովանդակություն՝
Tobias Kühnhanss, Kathrin Streit/ Տոբիաս Քյունհանս, Կաթրին Շթրայթ
(Անտառների, ձյան և լանդշաֆտային հետազոտությունների Շվեյցարիայի դաշնային ինստիտուտ— WSL)

Արտադրության կառավարում, խմբագրում և ձևավորում՝
Nickolai Denisov, Geoff Hughes, Carolyne Daniel/ Նիկոլայ Դենիսով, Ջեֆ Հյուզ, Քերոլայն Դանիել
(Zoï բնապահպանական ցանց)

Հայերեն լեզվով թարգմանության ապահովում՝
Arpine Sukiasyan /Արփինե Սուքիասյան

Review and inputs/գրախոսություն և դիտարկումներ՝
Շվեյցարիայի զարգացման և համագործակցության գործակալություն, «Շեն» ԲՀԿ, ԱՌՆԱՊ/Աղետների ռիսկի նվազեցման ազգային պլատֆորմ, «Իմ անտառ Հայաստան» (My Forest Armenia), «Էյ-Թի-Փի» (Armenia Tree Project)

WSL Նախագծի համակարգում
Dominik Braunschweiger, Marco Pütz / Դոմինիկ Բրաունշվայգեր, Մարկո Պյուց
(Անտառների, ձյան և լանդշաֆտային հետազոտությունների Շվեյցարիայի դաշնային ինստիտուտ — WSL)

Սույն փաստաթուղթը պատրաստվել է Շվեյցարիայի զարգացման և համագործակցության գործակալության (SDC) ֆինանսական աջակցությամբ: Փաստաթղթում ներկայացված բովանդակության համար ամբողջությամբ պատասխանատու է Անտառների, ձյան և լանդշաֆտային հետազոտությունների Շվեյցարիայի դաշնային ինստիտուտը (WSL), և այն որևէ պարագայում չի կարող մեկնաբանվել որպես Շվեյցարիայի զարգացման և համագործակցության գործակալության պաշտոնական դիրքորոշում:

Թիրախային հանրություն

Սույն փաստաթերթիկը նախատեսված է անտառամերձ և անտառվերականգնման տարածքներում բնակվող, ինչպես նաև այդ տարածքների կառավարման և օգտագործման հետ առնչվող տեղական համայնքների համար: Թեմայի վերաբերյալ առավել մանրամասն տեղեկատվությունը ներկայացված է համապատասխան զեկույցում:

«Հայաստանում անտառների վերականգնում և կլիմայի փոփոխություն» (FORACCA) ծրագիրն իրականացվում է Շվեյցարիայի զարգացման և համագործակցության գործակալության (SDC) ֆինանսական աջակցությամբ: Ծրագրի իրականացումն ապահովում է Անտառների, ձյան և լանդշաֆտային հետազոտությունների Շվեյցարիայի դաշնային ինստիտուտը (WSL)՝ Zoï բնապահպանական ցանցի և Հայաստանի անտառային դաշինքի (Forest Alliance of Armenia) հետ համագործակցությամբ: